

## Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ի Թ Ի Ի Ն

ԼԷՅՈ.—«Ախտահանութիւն»: 1893 թ., 175 էջ. Բաքու, տպարան  
Արօր: Գինն է 40 կոպէկ:

«Ախտահանութիւն» էտիւդի նը-  
պատակը լոկ գեղարուեստը չէ, ալ  
հեղինակը ունեցել է ձգտում մարմ-  
նացնելու մի բարձր, անպայման հա-  
մակրելի, էտիկական (բարոյագիտա-  
կան) սկզբունք: Գոհեա բոլորովին  
հաւանական է թուում մեզ, որ պ-  
լէօն կամեցել է ընթերցողին բերել  
ալն եզրակացութեանը, թէ անհատը  
չէ կարող երջանիկ լինել, ապահով  
կեանք ունենալ, եթէ նորան չըջապա-  
տողները տանջում են, անապահով  
կեանք ունին: Մի հարուստ, որը  
նիւթական և ոչ մի պակասութիւն  
չէ զգում, ախուռամենալն չէ կա-  
րող երջանիկ լինել, քանի որ նո-  
րան չըջապատում է աղքատ ժողո-  
վուրդը: Եթէ մեր ապահոված պա-  
րոնը կղզիացած կեանք կը վարէ,  
նա մի տեսակ որբութիւն կը զգալ,  
բանտարկւածի նման կը լինի...  
Բնութիւնը, բնութեան արարած-  
ները (մարդիկը) քարշում են նորա  
սիրտը, դուրս են հրաւիրում... Եւ  
նա չէ կարող չտանջւել անշատող

պարիսպների մէջ: Բայց եթէ նա  
թողնում է կղզիացած կեանքը,  
չփութում է մարդկութեան հետ, չէ  
կարող դարձնալ բաղդաւոր լինել,  
եթէ չէ մասնակցում նոցա հոգսե-  
րին և ուրախութեանը, Հետեապէս  
իւրաքանչիւր ապահոված անհատ  
հէնց իւր սեփական երջանկութեան  
համար պիտի ապրէ հասարակու-  
թեան հետ, կապէ իւր վիճակը նորա  
վիճակի հետ, նորա հետ ձեռ ձեռի  
տաւած մաքառէ նեղութիւնների դէմ,  
մասնակցէ գոյութեան ընդհանուր  
կուլին իւր բոլոր ուժերով:

Որքան մաքուր, բարձր, մարդա-  
վալել միտք, որ ունեցել է պ. Լէօն,  
Տեղ տեղ հերոսների արած դատո-  
ղութիւններէց երևում է, որ հեղի-  
նակի միտքը սա է: Միայն թէ հե-  
ղինակի միտքը իրագործւած չէ վէ-  
պի պատմածքի մէջ, նորա հերոսի  
մէջ մարմնացած չենք տեսնում Լէօր  
բարձր միտքը:

Մեր առջև պատկերացած է մի  
հարուստ պարոն, որը թէև բարի և

սիրող պնդանքն և հար է, բայց սաստիկ վախկոտ է, Խոլերալի ժամանակ նա ամենածաղրակեղ միջոցներ էր որոնում իւր ընտանիքը վարակելուց ազատ պահելու համար: Նա վախկոտութեամբ թէ ինքն է տանջւում և թէ ընտանիքին է չարաբարում: Խոլերան աճում է: Մեր հետոք, Արդարեանը գնում է գաւառապետի մօտ, որ նորան խնդրէ հեռացնել շրջակայքի աղքատ բնակիչներին դէպի հեռու վրանները: Բայց հերոսի խօսքը բերանումն են թողնում և գաւառապետը, բժիշկը և միւսները նորա վրին գնում են մի քանի հարիւր բուրլի զոհել ձրի (ժամանակաւոր) ճաշարան և թէչարան բանալու համար: Եւ նա զոհում է:

Ճաշարանը բացելուց քիտու խոլերան սկսում է պակասել: Եւ ահա այլ ևս նա չի վախնում, նա ուրախ է, երջանիկ է... Կինը, Աշխէնը, սկըսում է աւելի սիրել նորան, վզովն է վաթաթելում...

«Ա՛խ, աչք շատ լաւ է... (խոլերալի պակասելը) — ասում է տիկինը ամուսնուն — Եթէ ուզում ես որ հանգիստ ապրենք, աւելացրո՛ւ (ճաշողներին թիւը), թող ափսոսանք մեծացնեն, որ օրական երկու հարիւր հոգի ուտեն: Ո՞ւզում ես մեր և մեր երեխաներին հանգստութիւնը...»

Ուրեմն մեր հերոսի արած բարեգործութիւնը ուրիշ մի բան չէր, բայց եթէ դարձեալ իւր ընտանիքը ապահովելու մի միջոց, Նորան դէպի բարեգործութիւնը դրողը զուտ խղճահարութիւնը չէ, սրտի էտիկական մեծութիւնը չէ, այլ լոկ իւր

անձի և սեփական ընտանիքի շահը, իսկ պ. Լէօն Արդարեանի բարեգործութեամբ հիացած է, ուզում է երկինք բարձրացնել նորան, որ ամենքը տեսնեն և սքանչանան Արդարեանի բարոյական գեղեցկութեամբ: Իսկ մենք բոլորովին հակառակ կերպով ենք նայում այդ գեղեցկութեան վրայ:

Մի հարուստ մարդ, որը ո՞վ գիտէ ինչ ծուռ ու մուռ միջոցներով հարստացած հօր ժառանգն է, որը ոչինչ չէ խնայում սեփական կեանքի բարօրութեան համար, ժողովրդի շահան աղէտի ժամանակ վերջապէս համաձայնել է «մի քանի հարիւր բուրլի» չառտել ժողովրդի առաջը, աչն էլ իրան ապահովելու նպատակով: Գլխներին տաւ աչք մի քանի հարիւրները, որ շան առաջը նետած փշանքների և նմանում: Այսօր Արդարեանների սեփական ապահովութիւնը պահանջում է մի քանի հարիւր բուրլի զոհել ժողովրդի համար, իսկ վաղը նոցա ապահովութիւնը կը պահանջէ (և շատ անգամ խակապէս պահանջում է), որ նոյն ժողովրդից հարիւրների փոխարէնը հազարներ ծծեն և նոքա կը ծծեն և դարձեալ իրանց երջանիկ կը զգան:

Մենք հաւատացած ենք, որ պ. Լէօն չէ կամեցել այդպիսի աշխարհակ պատկեր ստեղծել, բայց նա չէ կարողացել իւր իղէալը ամբողջացնել, իսկ կիսատ իղէալը միշտ աշխարհակ է լինում: Ընթերցողի ուշադրութիւնն ենք դարձնում հետեւեալի վերաջ:

«Յանկարծ նրա (Արդարեանի) միտքը լուսաւորեց մի քանի հաւտ

ճառագալթներին. նա հանգստացաւ, նա դտաւ. Հասկացալ, ասաց նա,— հասկացալ... Դու առաջնորդիր ինձ դէպի ակնտեղ, ուր լաւն է, իմ Աշխէն, իմ թագուհի...» Այդ խօսքերից մասամբ միայն երևում է Լէօի իսկական միտքը, բայց միայն մասամբ: Մենք չգիտենք թէ ալդ «թագուհին» ինքը ինչ արարած էր, հետևապէս մեզ համար գաղտնիք է մնում, թէ որ աստիճանի բարձրութեան կը հասնի նորա առաջնորդութիւնը: Վերեւում մենք տեսանք, որ նա խուրախից վախճանալով մարդուն համոզում էր ճաշարանը մեծացնել, Եթէ ապագայումն էլ ալդքան է առաջնորդելու իւր ամուսնուն, նորա առաջնորդութիւնը գրոշ չ'արժէ: Ուրիշ բան կը լինէր, եթէ նա ամուսնուն տանէր դէպի Լէօի իսկական իդէալը, այսինքն նորան համոզէր բոլոր սրտով, իւր ամբողջ էութեամբ նւիրել ընդհանուր տառապանքները վերացնելու գործին... Իսկ կիսասիրտ... Հրէաստանի ձկնորսները անիծում էին կիսասիրտ Անանիաներին, իսկ մենք պիտի սոցա առաջ օրհներգ երգենք. ոչ երբէք, թող սոքա կամ բոլորովին տաք լինեն, կամ բոլորովին սառն. գոլ ջուրը զգւելի է:

Մենք պիտի թուլ չտանք որ սոքա իրանց փշրանքներով մարդկանց կուրացնեն:

Մի ուրիշ բան էլ կալ. եթէ Արդարեանը իսկապէս վերածնւած լինէր, ինչպէս հեղինակը կամեցել է ցոյց տալ (բայց չի լաջողւել), ալդ էլ անբնական կը լինէր: Որովհետեւ մարդիկ անկարծակի չեն վերածնւում: Մենք ընդունում ենք, որ անհատի ընաւորութեան մէջ կարող են աշխարհի լեզափոխութիւններ տեղի ունենալ, որպիսիք տեղի են ունենում ժողովուրդների քաղաքական կեանքի մէջ: Բայց ինչպէս քաղաքական լեզափոխութիւնները, նոյնպէս և անհատական վերածնութիւնները երկար ու բարակ նախապատրաստութիւն են ունենում: Իսկ ալդպիսի նախապատրաստութիւն մենք չենք տեսնում Արդարեանի կեանքի մէջ: Նա գաւառապետի տանը միշտ քրաղներ լսելով և հէնց թըշառութեան քանի մի օրինակներ տեսնելով, չէր կարող վերածնւել: Իսկ եթէ նա չէր կարող վերածնւել և իսկի չվերածնւեց էլ, մենք առանձին նշանակութիւն չենք տալ նորա արած «բարեգործութիւններին»:

Ս. Թ.